

զանազան ֆրանսիական մեջ, մասնագիտական տարբեր մարզերում մեջ, շնորհիվ հետևելու փիլիսոփաներուն, որոնք նաեւ այլ ճիւղերում մեջ իրենց ուրոյն մասնագիտութեամբ կը զբաղէին.-

- ազգաբան **Կ. Լէւի-Ստրոս** (Claude Lévi-Strauss, 1908 – 2009 թ.),
- գրականագետ **Ռ. Բարթ** (Roland Barthes, 1915 – 1980 թ.),
- հոգեվերլուծող **ժ. Լական** (Jacques Lacan, 1901 – 1981 թ.) եւ
- պատմաբան **Մ. Ֆուկո** (Michel Foucault, 1926 – 1984 թ.):

Կառուցապաշտութիւնը, ազդուելով ֆրանսացի փիլիսոփայ **ժ. Դերիդայի** (Jacques Derrida, 1930 – 2004 թ.) *ապակառուցապաշտութենէն* (Deconstructivism, որ տեսակ մը մեկնագիտական կամայականութիւն է), կը փորձէ վերոյիշեալ *մեկնագիտական* (Hermeneutic) եւ *կառուցաբանական* (Structural) եղանակները հաշտեցնել: Արդարեւ, ծնունդ կ'առնէր նոր ուղղութիւն մը՝ *Յետ-կառուցապաշտութիւնը*:

8. ՅԵՏ-ԿԱՌՈՒՑԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Յետ-կառուցապաշտութիւնը (Post-structuralism), ֆրանսայի մեջ, 1960-ական թուականներու վերջաւորութեան, ինչպէս նշեցինք, կառուցապաշտական ուղղութենէն բաժնուած եւ յաճախ անոր հակառակ փիլիսոփայական նոր ուղղութիւններու հաւաքածոյ մըն է, որ շատ աւելի մօտ է՝ ժ. Դերիդայի *ապակառուցապաշտութեան* (Deconstructivism):

ժ. Դերիդա կը դառնար յետ-կառուցապաշտութեան ականաւոր ներկայացուցիչը: Այս իմաստով, 1967 թուականին լոյս տեսած իր գլխաւոր երկն է՝ «Գրութիւնը եւ տարբերութիւնը» (ֆրնս. բնագիր՝ „L'écriture et la différence“, անգլ.՝ „Writing and Difference“): Յիշարժան է նաեւ պատմաբան-հոգեբան **Մ. Ֆուկո** եւ իր յատկանշական, որպէս կառուցապաշտութեան մեթոտ ներկայացուած՝ «Քննախօսութեան վերլուծում»ը (Discourse Analysis), որ իր իւրայատուկ տեղը ունեցաւ յետ-կառուցապաշտութեան ոլորտին մէջ: Մ. Ֆուկոյի «Քննախօսութեան վերլուծում»ը, որ հետամուտ է իմացութեան կամ գիտութեան կարգ ու կանոնին, ժամանակի ընթացքին փոփոխութիւններ կրեց:

Դերիդայի կողքին, յետ-կառուցապաշտութեան ուղղութեան մեջ, նշանաւոր դարձան նաեւ նախկին կառուցապաշտ փիլիսոփաներէն՝ գրականագետ **Ռ. Բարթ**, հոգեվերլուծող **ժ. Լական** եւ պատմաբան-հոգեբան **Մ. Ֆուկո**: Ասոնց վրայ աւելցան ֆրանսացի այլ փիլիսոփաներ եւս.-

- **Գ. Դելէօզ** (Gilles Deleuze, 1925 – 1995 թ.),
- հոգեվերլուծող **Պ. Ֆ. Գուատարի** (Pierre Félix Guattari, 1930 – 1992 թ.) եւ
- ընկերաբան **ժ. Բոդրիյար** (Jean Baudrillard, 1929 – 2007 թ.):

Յետ-կառուցապաշտութիւնը ենթական (Subject) կը նկատէ ոչ թէ որպէս ստեղծագործ ու ինքնավար էակ, այլ միայն որպէս օտարի կամ ուրիշի ազդեցութեան տակ գտնուող արտադրանք մը: Այս գաղափարը կը հաստատեն վերոյիշեալ փիլիսոփաները, իրենց մշակութային զանազան ոլորտներու մէջ,